

Մ Ա Ս Ի Ս

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

35-րդ ՏԱՐԻ

1886 ՀՈԿՏԵՄԲԵՐ 4

ԹԻԻ 3842

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇՈՒԲԱԹ 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՊՈՍՊԵՅ ՔԱՂԱՔԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Պոմպէյ՝ փոքր ու բազմամարդ կղզի մ'է և իւր տարածութիւնն է քսանուերկու մղոն քառակուսի։ Միջոցին անձկութեանը պատճառաւ ժողովուրդը բռնադատուած է տանց մէջ խռնած բնակելու։

Կղզին՝ որ նախ Բորդուգալցոց իշխանութեան տակն էր, 1662ին Անգղիացւոց ձեռքն անցաւ։ Այն ատեն բնակչաց թիւն էր 10,000․ յետոյ կամաց կամաց աճելով՝ 1716 թուականին ելաւ 16,000 հոգի․ իսկ դար մը ետքը, 1816 ին վարչութեան ըրած ազգահամարի մը համեմատ՝ 161,550 հոգի ելեր էր, այսպիսի համեմատութեամբ։

Անգղիացի ժողովրդականք	1,840
» զինուորականք	2,460
Բնիկ քրիստոնեայք Բորդուգալցիք	
Եւ Հայք	11,500
Եբրայեցիք	800
Մահմետականք	28,000
Հնդիկք	103,800
Փարսիք	13,150

161,550

Ըստ աշխարհամարին որ եղել ի 1852 ամին, ժողովրդեան թիւն էր 644,405․ մինչդեռ 1864 տարւոյն՝ էր 816,562։ Այս մեծ տարբերութեան պատճառն է որ Ա-

մերիկայի պատերազմին ժամանակ ի Պոմպէյ մեծ գործունէութիւն մը բացուելով, Հնդկաստանի ամեն տեղէն բազմութիւն մը բաղդախնդրաց եւ գործաւորաց թափեցաւ հոն՝ ի խնդիր բաղդի եւ աշխատութեան․ ուստի եւ այն սակաւ ամբ մեծ բարեբաղդութիւն ու ճոխութիւն բերին ի քաղաքն։ Բայց ապա ամերիկեան պատերազմին լմննալովը ու գործոց նուազելովը, միւսանգամ եկաւորք քաղուեցան և ցրուեցան։ Սակայն եւ այնպէս ցայսօր Պոմպէյ բազմամարդ է քան զՎատրաս, եւ նաեւ բրիտանական կայսրութեան երկրորդ բազմամարդ քաղաքը կը համարուի։

Արդ 1816 թուոյն ազգահամարին նայելով՝ Հայք իսկ իրենց թուովը քրիստոնեայ ժողովրդեան նշանաւոր մաս մը կը կազմէին։ Ընդհակառակն այսօրուան օրս այնպէս նւազած են որ մասնաւոր թուարկութեան մը տակ չեն իյնար։ Յորջափ որ վաճառականութիւնը իրենց ձեռքն էր ձուլ ու բաղմաթիւ էին․ բայց երբ անգղիացիք բազմանալով վաճառականութիւնը իրենց ձեռքը գրաւեցին, Հայք բռնադատեցան տեղի տալ եւ ուրիշ տեղուանք գաղթել ի խնդիր բաղդի։ Եւ այսպէս այսօրուան օրս հազիւ թէ քանի մը Հայ ընտանիք կան ի Պոմպէյ, որոց անհատից համագումար թիւը երեսունի չի հասնիր։

Փոքր եկեղեցի մի ունին, նուիրեալ Պետրոս առաքելոյն, զոր իրենց հարց բարեպաշտութիւնը եւ ազգասիրութեան նախանձը կանգնեց են․ որպէս զի հեռի ի հայրենեաց՝ չը մոռանան իրենց ազգութիւնը եւ հայրենական ծէսն եւ արարողութիւնն։ Եւ որովհետեւ գաղթեալքն ի Պոմպէյ, չինոյրք եկեղեցւոյն, էին ի ժողովրդ-

դոց նոր Զուղայի, առաջնորդական իրաւասութիւնը կը վերաբերի Ամենաիրկիչի վանուց առաջնորդին. որոյ է իրաւունք միշտ անուանել տեղւոյս հովիւը: Արդի վիճակաւոր քահանայն էր Տէր Յովհաննէս Մարկոսեան. որ ճգնազգեաց կեանք մը կը վարէր, միշտ անմեկին իւր անմխիթար բնակարանէն: Եկեղեցւոյն կից կան երկու տունք խանութներով հանդերձ, որոց մին՝ անգարդ սենեակ մը, կը ծառայէ Տէր Հօրը իբր բնակարան, իսկ միւսը՝ խանութներով հանդերձ, ի վարձու տուեալ է. եւ եկամուտը կը ծառայէ իբր թոշակ քահանայի:

Որովհետեւ այն ոմանք Հայը, որ մնացեալ են դեռ եւս, իւրեանց լեզուն մոռացեր են, եւ անփոյթ իւրեանց ազգային ծիսից՝ չեն յաճախեր եկեղեցական պաշտամանց, ի բաց առեալ տարւոյն մէկ կամ երկու աւթիւ, բնական է որ առաջնորդ քահանայն իսկ առանձնակեաց կեանք մը վարելու բռնադատի: Սակայն այս վիճակաւոր քահանայից զոհն իսկ եռամեայ է. իրեք տարի մէկ մը այլ ոմն կուգայ իւր տեղը, եւ ինքն ազատ է իւր հայրենիքը դառնալու:

Կան նմանապէս քանի մի քրիստոնեայ Հնդկիք, Տէր Յովհաննիսին առաջնորդութեան ներքեւ, որ ըստ ասելոյ Պ. Թորոս Խաչակեանի, որ այն ատեն ի Պոմպէյ դանուելով արարողութեանց կատարման նախանձայող էր, աւելի ջերմեանքն են քան զբուն Հայս: Սորա եւս եւ հայերէն լեզուի փոքր տեղեկութիւն ունին, և ի սոսա գլխաւորն է Սաշիկ մականունանեալ ոմն, եկեղեցւոյն սպասաւոր, եւ ի կանանց Սանամ ոմն եւ այլ երեք այրի կանայր:

Ամեն կիւրակէ կանուխ յառաւօտուն անցաւորք եկեղեցւոյն դրան մօտէն քերելով՝ ներսը խորանին վառած ճրագները կը նշմարեն, միանգամայն և նաղմուսերգութեան ձայնը կը լսեն: Քահանայն իւր մէկ տիրացու ձախակողմն ունենալով՝ անհրաժեշտ ժամակարգութիւնը կը կատարէ. սակայն խորհուրդը միայն քանի մը անգամ տարին կը մատուցանէ: Եկեղեցին միշտ թափուր է, և միայն այն մէկ քանի Հնդկիք, զորս յիշեցինք, երբեմն երբեմն կը տեսնուին: Փոքր

մի եւս և այս եկեղեցին պիտի խալաւ լուէ. և ըստ ասելոյ Տէր Յովհաննէս, գուցէ տասը տարիէն ա՛յլ եւս հարկ չ'ըլլայ քահանայ մի զոհել այն կողմերն ուր իւր պաշտօնն գրեթէ անօգուտ է: Որովհետեւ այն ոմանք ի Հայոց որ դեռ եւս կը մնան, ոչ միայն լեզուին կորուսած են, այլ և ազգայնութեան հոգի իսկ չ'ունին:

Եկեղեցւոյն ներսը ամենեւին անգարդ է: Խորանը որ ըստ հայկական արարողութեան կանգնած է, սլատկեր մը ունի՝ որ Տեառն մերոյ վերջին ընթրիքը կը ներկայացնէ. եւ է չափաւոր արհեստիւ շինած սլատկեր: Սեղանոյն երկու կողմը երկու մթին խորշեր կան. մին կը ծառայէ իբր զանգակատուն. միւսը իբր աւանդատուն: Եկեղեցին ամենեւին ճոխութիւն չ'ունի եւ ոչ իսկ վայելուչ հանդերձեղէն: Ճաշոցն եւ աւետարանը, որ միշտ սեղանին վրայ կը գտնուին, Վենետիկ տպագրուած են:

Խորանին ոտքը հետեւեալ արձանագրութիւնը կը կարդացուի.

« Կառուցաւ սուրբ եկեղեցին յանուն սրբազան առաքելոյն Պետրոսի, ի հայրապետութեան Տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց, արդեամբք Համատանցի Պարոն Յակոբին, ի յիշատակ ծնողացն իւրոց, հօրն՝ Պարոն Պետրոսին եւ մօրն՝ Զանազան խաթունին. հիմնարկութեամբ սրբոյ աթոռոյն Էջմիածնի նուիրակ Յակոբոս արքեպիսկոպոսին. — Յամի Տեառն ՌՁՂՁ եւ յամենանն սեպտեմբերի Լ. եւ Թր. ԳՃԻ »:

Իսկ աւանդատան դրան վրայ կայ հետեւեալ արձանագիրը.

« Նորոգեցաւ արտաքին կողմնէն սրբոյ եկեղեցւոյս հանդերձ շինուածովքն՝ արդեամբք Աղա Յակոբ Յարութիւն թաղեանց, ի յիշատակ մօրն թամար աղիւ տիկնոջն եւ քեռն Սննա օրիորդին՝ ի Քրիստոս հանդուցելոց. ձեռամբ նուիրակ Յակոբոս արքեպիսկոպոսին. — Յամի Տեառն 1801 Լ. Շամն 3:

Սլապէս այս եկեղեցւոյս ալ, զոր հայկական բարեպաշտութիւնը կանգնեւ է, նոյն վերջ կը սպառնայ՝ ինչ որ ունեցան այլ Հայք գաղթականութեանց կանգնած վանատեղիք ու եկեղեցիք: Արդէն իսկ ի Պոմպէյ՝ Հայու անունը հազիւ երբեք կը լսուի. եւ միայն խոնարհ փողոցի մը պատին վրայ Armenien Lane անունը դեռ եւս արձանագրեալ կը մնայ. նշան թէ այն փողոցը ամօք յառաջ Հայոց բազմութիւնը կը բնա-

կէր : Փողոց խոնարհ , մթին , նեղ եւ անպաճոյճ , ուսկից հազիւ երբէք կը տեսնես որ Հնդիկ մը անցնի : Այսպէս անհետացեալ Հայք իրենց անցին նշան՝ միայն անուն մի կը թողուն . եւ չիք տարակոյս թէ օր մը երբ քաղաքը նոր շինութիւններով զարդարուի ու նորոգուի , տեղին կերպարանափոխ ըլլալով , նոյն փողոցին անունն ու հետքն ալ նոր փնտածոց հիման տակ թաղուին :

Պոմպէյի միւս բնակիչք տեսակ տեսակ ազգութիւններէ կը բաղկանան , անանկ որ՝ կ'ըսեն , աշխարհիս վրայ չը կայ ուրիշ տեղ մը ուր տեսնուին այնքան մարդոց զանազան ցեղեր , ազգեր ու կրօնքներ ինչպէս հոս ի Պոմպէյ : Եւ այս ամենայն ժողովուրդը , թէպէտ մերձակայ նահանգներէն գալով հոս կը ժողովին , բայց եւ այնպէս թէ կերպարանօք թէ սովորութեամբք եւ թէ այլ ամենայն նշանօք՝ գլխովին կը զանազանին մէկմէկէ : Հոս ի Պոմպէյ ամեն քայլ առնելուդ բեղ կը դիմաւորեն Հնդիկք , Պանի-անք , Մահրադայք , Մահմետականք , Աֆղանք , Պարսիկք , Արաբացիք , Տաճիկք , Մալեացիք , Հապհէք , Հրեայք , Փարսիք կամ նախնի Պարսիկք , գաղթականք , եւ Բորդու գալցիք : Եւ հոսկ ուրեմն իբր ասոնց ամենուն լրումն՝ կուգան զանազան ազգութիւնք Եւրոպայի , յորս յայտնապէս կը գերազանցէ Անգլիացիք :

Պուտայի հետեւողք , ձէյնք , Պրահմինք , եւ Պադէայք կը բաղկացնեն ժողովրդեան մաս մը , որոնց կրօնքը կ'արգելու կենդանեաց միս ուտել . ասոնք ընդհանուր ժողովրդեան հարիւրին ութը կը բաղկացնեն : Ասոնց ամենուն կրօնական սկզբունքներն պուտականաց կը նմանին : Պատկերներ կը պաշտեն եւ կը հաւատան հոգեւորութեան . անոր համար ալ ոչ երբեք կենդանի մը կը սպաննեն : Իրենք զիրենք բոլորովին վաճառականութեան տուած են , ուստի եւ անբաւ հարստութիւն կը հաւաքեն : Իրենց տաճարները բազմաթիւ են եւ մեծածախ , ոսկով , գոհարներով եւ արձաններով զարդարած :

Ուղղափառ մականուանեալ Հնդիկքն՝ Պոմպէյի ընդհանուր ժողովրդեան երեք հինգերորդքն կը բաղկացնեն , եւ ըստ իրենց

կրօնական սկզբանց երկու կը բաժնուին . մէկ մասը երկրպագութիւն կը մատուցանէ Վիշնու կամ պահպանիչ դից , միւսը Շիվա կամ ապականիչ դից , որք Հնդկային երեակ դից երկրորդ եւ երրորդ դիք են : Շիվայի հետեւողք իրենց ճակատը հորիզոնական գծերով կը դրոշմեն , մինչդեռ Վիշնուի հետեւողք ուղղահայեաց գծեր կը գրծեն : Եւ այս նշանները հարկ է որ ամեն Հնդիկ ամեն առտու դրոշմէ անհրաժեշտ իր ճակտին վրայ , որպէս զի միշտ դից շնորհքին մէջ գտնուի : Լուքշմի է Վիշնու դից կինը , որում Հնդիկք մեծ յարգութիւն կը մատուցանեն : Պադէայք իրենց քուրմերը կը համարին ի դից սերեալ , անոր համար ալ մեծապէս կը յարգեն զիրենք : Բաց ասկէ այս Հնդիկք կը պաշտեն զՎուշմուտի , որ է փղապուծ դիք : Շիվային անձնապէս պաշտօն չեն մատուցաներ . հապա իր ջերմեռանդը գլխաւորապէս իւր Գալի կնկանը երկրպագութիւն ու պաշտօն կը մատուցանեն :

Պրահմիններէն ետքը բնիկ Հնդկաց մէջէն կարեւորագոյն դասն են Պանիանք : Ասոնց համար կը զուրցեն թէ անյագաբար միայն շահասիրութեան ու գանձ ժողովելու հետամուտ են . եւ թէպէտ անհուն գանձ ունենան , հանդերձ այսու փոքր դրամ մը ձեռք բերելու համար ամենայն միջոց կը բանեցնեն : Կան շատք որ երկու կամ երեք միլիոն ուռփիի տէր են . եւ սակայն եթէ կէս ուռփիի շահ մըն ալ տեսնան քաղաքին մէկ ծայրէն միւս ծայրը ոտքով վաղելու անփոյթ չեն ըլլար : Ի Սուրադ խօսք մը կայ՝ որ կ'ըսէ , թէ երեք Հրեայ պէտք են մէկ Զինացի մը շինելու , երեք Զինացի ալ մէկ Պանիան մը : Որովհետեւ իրենք զիրենք բոլորովին վաճառականութեան տուած են՝ Հնդկաստանի ամեն դին կը ճանապարհորդեն . կան որ միշտ վաճառականութեան հետամուտ՝ երկու երեք տարի իրենց ընտանիքէն հեռու կը մնան : Այս ժողովուրդը , որոց շատք ձէյնք են , մեծապէս կը յարգեն կենդանեաց կեանքը . անանկ որ ինչ եւ իցէ չնչին որդ մըն ալ սպաննելէն կը զգուշանան . եւ անսովոր բան չէ ի Պոմպէյ տեսնել այսպիսիներէն որ միջիւնները սնուցանելու համար ճամբան ու պատերու վրայ չաքար կը ցանեն . թող այն հաղարաւոր ա-

զատ աղանդներն, որոց կերակուրը իրենք կը հոգան, եւ բազմաթիւ անկեղանոցներ, ուր ինչպէս առանձին գլխով ըսինք, ծերացած, անպիտանցած, հիւանդ, պակասաւոր եւ անտէր կենդանիք կը ժողովեն ու կը խնամեն :

Մարմարիք կը համարին իբր Պանիանց մէկ տեսակ մը, որոնք միջին Հնդկաստանէն կուգան : Ասոնք սեղանաւորք ու փոխատուք են . անանկ որ Պոմպէյի ժողովրդէան մեծ մաս մը միշտ ասոնց պարտապան են :

Այլ բաղադրին ստորնագոյն եւ աւելի բազմաթիւ մասը կը կոչուի Բուլի, որ են ձկնորսք կամ գործաւորք, եւ որք կրնան իբր կղզոյս բուն բնիկք համարիլ : Ասոնց բազմութիւնը ամեն օր բաղադրի ամեն դին կը տեսնուին, մանաւանդ այն կողմերը ուր կը գտնուին բազմաթիւ գործարանք : Իրենց բազմութեամբը եւ աղտեղի հանդերձներովը բաղադրին խորշելի երեւոյթ մը կը տեսնուին :

Մահրադայք ուրիշ դաս մը կը կազմեն ժողովրդէան, ոյք կը համարին իբր հնարագէտ, խելացի, արիասիրտ եւ գործունեայ : Ասոնք բաց ի Հնդկային դից խմբէն՝ ունին նաեւ իրենց առանձին ժողովրդական աստուածներն եւ դեւերն . իրենց կրօնական զգացմանց մէջ եռանդնալից՝ ուխտատեղիները յաճախել շատ կը սիրեն : Բայց վաճառականութեան ամենեւին տաղանդ չունին . քիչ կան որ ինքզինքնին խանութպանութեան կամ առեւտրոյ տան : Քանի որ դեռ Անգլիացիք չէին տիրած տեղւոյս, ասոնք էին որ իրենք զիրենք կուտային զինուորութեան, քաղաքապետութեան, հովուութեան եւ երկրագործութեան : Բայց հիմա իրենց զբաղանք ըլլած են օրէնագիտութիւնը եւ գրագրութիւնը . իսկ իրենց մէջէն ռամիկը՝ ակոռապետք ու կառավարք կ'ըլլան :

Մահմետականք՝ որք ժողովրդէան մէկ հինգերորդը կը կազմեն, իրենց կրօնական սկզբանցը համեմատ երկու մեծ խումբ բաժնուած են, Սունիք եւ Շիայք : Առաջինք կը համարին ուղղափառ մահմետականք, որ Մահմետէն ետքը Խալիֆայից պատմական յաջորդութիւնը կ'ընդունին, Ապուլէքքով,

Օմարով եւ Դամասկոսի Խալիֆաներով . մինչդեռ երկրորդներն Ալիին կը հետեւին, եւ Հասան ու Հիւսէյն անոր որդւոցը : Շիայք աւելի բազմաթիւ են ի Պոմպէյ . որոց կը վերաբերին եւ Պօրայք, որ են ամեն տեսակ նիւթի աստանդական վաճառականք, եւ ի Հնդկիս չը կայ տուն որ իրենք ներկայացած չ'ըլլան : Ասոնց համար կը զուրցուի որ թէպէտ եւ մահմետականք են, սակայն սովորութեամբ, կերպարանօք ու տաղանդով Հրէից կը նմանին : Սունիք կը բաղկանան յԱրաբացւոց, ի Տաճկաց եւ ի Հնդկի մահմետականաց Կոնկանի : Ասոնց թիւն ըստ եղանակին կ'աճի ու կը նուազի . որովհետեւ Պոմպէյ գլխաւոր նաւահանգիստ ու ժողովատեղի կը համարի Մէքքէ գնացող ուխտաւորաց :

Այս ամենայն ժողովրդոց մէջէն՝ Փարսիք աւելի սակաւաթիւ են . սակայն աւելի գործունեայ են, եւ ցեղական աւելորդապաշտ խտրութիւններ չունենալով՝ աւելի ալ ազատամիտ : Եւրոպացի դաղթականաց եւ գլխաւորապէս Անգլիացւոց աւելի մերձակաց՝ հեշտեաւ յաջողեր են անգլիական լեզուին ընտելանալ . անոր համար ալ բոլոր ժողովրդէան մէջէն ամենէն քաղաքակիրթ ու յառաջադէմ են : Իրենց պատմութիւնը յայտնի է : Եթովպերոք դարուն երբ մահմետականք տիրեցին Պարսկաստանի, փոքր մաս մը կրակապաշտից, որոնք դժկամակ էին իրենց հայրենական կրօնը թողլու, հայրենիքնին թողին եւ տուին իրենք զիրենք կամաւոր արքայանայ : Նախ եւ առաջ ապաւինեցան յՕրմուզ՝ Պարսկական Ծոցը . ուր կը զուրցուի թէ նաւաշինութեան արհեստը սորվեցան, որ եւ յետոյ իրենց մեծապէս օգտուէտ եղաւ : Քանի մը տարի ետքը այն տեղին ալ թողլով գաղթեցին ի ծովեզրս Հնդկաց, ի Տիւր, յափունս Քադիվարի : Սակայն հոս յաջողութիւն չը գտնելով՝ փոխադրուեցան ի Սանձան որ ի Ադգէրադ, ուր ճատու Ռամա Հնդիկ իշխանը զիրենք մեծ սիրով ընդունելով, թող տուաւ որ իւրեանց պաշտաման նուիրական հուրը վառեն : Հոս հետզհետէ բազմանալով՝ սկսան Ադգէրադի միւս գլխաւոր քաղաքները ցրուիլ, այն ալ խարհին բնակչաց հետ ամուսնութեամբ կապուիլ, ի վար արկանելով անոնց լեզուն ու սովորութիւնները : Բայց իրենց արտա-

քոյ կարգի ցեղական յաջողութիւնը կարծես այն ատեն սկսած է, երբ Եւրոպացիք ըսկիղըն ըրին Հնդկաստանի կողմերը նաւարկել: Փարսիք չունենալով բնկաց նախապաշարմունքները օտարաց դէմ, իբր թարգման ու միջնորդ ծառայեցին բնիկ Հնդկաց ու Եւրոպացւոց մէջ: Բայց աւելի իրենք զիրենք մօտ բռնեցին Անգղիացւոց, որով եւ սկսան զգալի կերպով օգտուիլ ու մեծ ճոխութեան տէր ըլլալ: Երբ Պոմպէյ կղզին Անգղիացւոց ձեռքն անցաւ՝ միայն մէկ Փարսի մը կար հոն: սակայն երբ սկսաւ քաղաքը հական տեղ մը ըլլալ, Փարսիք ամեն դիէն և գլխաւորաբար Սուրադէն սկսան հոն դիմել: մա. նաւանդ անոնք որ նաւաչինութեան հետա. մուտ էին: Այնուհետեւ սկսան իրենք զիրենք վաճառականութեան տալ, և այնպէս յառաջադիմեցին ու նշանաւոր եղան, որ Պոմպէյի վաճառականութեան մեծ մասը իրենց ձեռքն անցաւ եւ դեռ եւս այնպէս յառաջադէմ վիճակի մէջ կը շարունակեն: Ասոնց նշանաւոր մարդիկներէն մէկն եղաւ Ճէմէէճի Ճիճիպոյ ոմն, որ իւր բարեգործական գործերովը արժանացաւ քանի մի տարի յառաջ՝ վարչութենէն ազնուականի տիտղոսը ստանալու: Եւ այլ ոմն Գօուասմի Ճիհանկեր անունով՝ նոյնպիսի արդեանցը համար ասպետ անուանեցաւ:

Փարսիք բազմաձեռնեղ են, անոր համար ալ իրենց թիւը երթալով կը չատնայ: Այս ժողովուրդ ետնո ստորին դասերը հմուտ խառնութեան են ու ճարտար մեքենագործ: Եւ գլխաւորապէս ատաղձագործութեան արուեստին մէջ իրենց ճարտարութիւնը կը գերազանցէ: Նշանաւոր են ասոնց ձեռագործ տուփերն ու կերպ կերպ հետաքրքրական առարկաներն որ ամեն ճանապարհորդը իբր տեղւոյն յիշատակ իրենց տունը կ'առնեն կը տանին:

Պոմպէյի քրիստոնէից մեծագոյն մասը կաղմուղը Հնդկաբորդուգալիք են: ոյր սերեալը են ի նախին Եւրոպացւոց, որք բնակելով ի Հնդկիկս՝ ամուսնացան ընդ բնիկս երկրին: Իրենց հագուստը եւրոպական ձեւով է: Իսկ գլխարկին երկայն գլանաձեւ: Խորքերնին գրեթէ առհասարակ բոլորիկ: Թուի թէ ոչ գործունեայ եւ ոչ յառաջադէմ ժողովուրդ մի է, եւ Եւրոպա-

ցւոց իբր գրագիր, խոհակեր ու դերձակ կը ծառայէ:

Հրեայք որ կը բնակին ի Պոմպէյ՝ գլխաւորապէս եկած են ի Միջագետաց: Ասոնց մէջէն գլխաւոր ընտանիքն է Սասուն առնուանեալն, որ մեծ վաճառականութեան տուն մը ըլլալով՝ մեծ ճոխութեան ալ տէր է: Այս ընտանիքէս Ալպէրտ Սասուն առնունով մէկը իւր բարեգործութեանց համար 1871 ին՝ վարչութենէն ասպետ անուանեցաւ:

Արդ բոլոր այս այլ եւ այլ ժողովուրդք՝ որ մի եւ նոյն քաղքին մէջ կը բնակին, որ մի եւ նոյն օգը կը ծծեն, որ իրարու դրացի ըլլալով՝ մէկմէկու հետ բարեկամութեամբ ըլլալու են, իրենց ցեղական նախապաշարմանցը, կրօնական սկզբանց ու բաժանմանցը պատճառաւ՝ զիրար մահու չափ կ'ատեն: Եւ թերեւս եթէ վրանին զօրաւոր ու բարեկարգ ձեռք մը չը հսկէր՝ խռովութիւնը, սուրն ու կրակը անպակաս ըլլար մէջերնէն: Ի 1872 ամին Պոմպէյի կառավարիչը մահմետականէ մը զարնուելով սպաննուեցաւ:

Այս դէպքէս քիչ ետքը հանդիսեցաւ Սունիներուն Մօհուրում տօնախմբութիւնը, որ զվարչութիւնը մեծ վախի եւ զգուշութեան մէջ ձգեց՝ սպառնացեալ խառնակութիւններէ: Երկու կողմի հակառակօրդ մահմետականաց մէջ՝ մեծ ատելութիւն մը կար, և Շիայք այս կառավարչին սպանութիւնը առիթ կ'ուզէին առնուլ իրենց ատելութիւնը ի դործ դնելու: Խմբովին ոստիկանութեան երթալով՝ ըսին. « Ասոնք են այն մարդիկն որ ձեր վոխարքայն սպանեցին, վայրկեան մը աչքերնիդ գոցեցէք, ու մենք ատոնց արիւնը մեր ամիով կը խմենք, կեցած տեղերնին ալ ջրով կը լուանք »: Այս բանս բաւական է միայն որ ցուցնէ թէ ինչ աստիճան ատելութիւն կայ այս երկու մահմետական բաժանմանց մէջ: Նոյն հանդիսին առթով ամենայն միջոց ի վար արկին թշնամութեամբ իրարու հանդիպելու: Բայց ոստիկանութիւնն այնպէս իւր զգուշութիւնները բազմացուց՝ որ նոյն օրուան վտանգը թեթեւ անցաւ, միայն մէկ քանի հոգւոյ գլուխը պատուելով ու երկու հարկը հոգւոյ չափ բանտարկելով:

Արդ ինչպէս այս երկու բաժանմանց մէջ ատեւութիւնը վառ է, նոյնպէս է նաեւ միւս ցեղերու ժողովրդոց մէջ: Ի 1874 Մահմետականաց ու Փարսից մէջ ծագեցաւ ատեւութեան կռիւը: Որովհետեւ Մահմետականաց գերեզմանոցը Փարսից գլխաւոր տաճարին մերձ է, Փարսիք՝ Մահմետականաց մեծ բազմութիւն մը տեսնելով որ դադարի մը ետեւէն կ'երթային, վախցան չըլլայ թէ իրենց տաճարին վրայ յարձակելու դիտաւորութիւն ունենան. այսու երկիւղիւ յուզեալ սկսան Մահմետականաց վրայ բարեր արձակել: Այս գործէս մեծ չիօթութիւն մը ծագեց. Մահմետականք կատաղած՝ վազեցին Փարսից վրայ, անոնց շատ մը տաճար կործանեցին, եւ շատ մը մարդ ալ ըսպանեցին:

Այսպէս հզօր են կիրք եւ բաժանումներ այս բազմամարդ բազաքիս ժողովրդոց մէջ. բայց միանգամայն այս անպատեհութիւնս մեծ նպաստ է անդղիական վարչութեան, որ գրեթէ առանց զինուորի և առանց հրացանի՝ եօթը հարիւր հազար մարդ կը կառավարէ անյտանգ: Նաեւ այս ստոյգ է որ ժողովուրդը կրկնապէս կը շահի Անգղիոյ տիրապետութեամբ. վասն զի եթէ Անգղիացիք քաշուին ու երկիրը անտէրունչ մնայ, ժողովուրդը իսկոյն սուր առած ինքզինքը պիտի ջարդէ. եւ ասկէ կը հետեւի որ անհրաժեշտ կարեւոր է օտար կառավարութեան մը պաշտպանութիւնը:

Բայց եթէ օր մը գայ որ քաղաքականութեամբ այս ամենայն ժողովուրդը իրարու միտքը հասկնան եւ մէկմէկու ըսեն՝ ամենքս եղբարք ենք, ամենքս մի եւ նոյն հայրենեաց ծնունդ, մի եւ նոյն օդը կը ծծենք, նոյն շահը նոյն օգուտը կը վայելենք. թող տաճարը մեր կրօնական զգացումն ընդունի, բայց մեր քաղաքական կենաց չ'ընդդիմանայ, չը հակառակի. մեր հայրենական սէրը հաւասարապէս ըլլայ. այն օրը, կ'ըսեմ, որ Հնդկը կարենայ այս խորհրդածութիւններն ընել ու յայտնել, Անգղիացւոյն եւ օտարին ուրիշ բան ընելու պիտի չը մնայ եթէ ոչ իւր գլխարկը գլուխը դրնել եւ իւր նաւերը ապաւինիլ. շատ է՝ որ անոնց մէջ նետուելու ժամանակ բաւէ: Սակայն առ այժմ վախ չը կայ. դար պէտք

է գուցէ որ եւրոպական քաղաքականութիւնը Հնդկին մօրթը թափանցէ:

(ԲԱԶՄԱՎԵՊ)

Հ. Յ. Վ. ԻՍԱՎԵՐՏԵՆՑ

Կ Ի Թ Ա Վ Ա Ն

ՎՍՌԺԱՐԱՆԱՅ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Գերմանացի բժիշկ մը, Տոբթոր Բարլ Բէյլս, անգամ մ'եւս ուշադրութիւն կը հըրաւիրէ ժամանակակից երիտասարդութեան Փիզիքական անկման եւ «դպրոցական հիւանդութեանց» վրայ որք յառաջ կուգան դպրոցական արդի դրութենէն: Այդ հիւանդութեանց մէջ առաջին տեղը կը բռնեն աչաց տկարութիւնը եւ գլխաւորապէս կարճատեսութիւն: Այլ և այլ դպրոցներու մէջէ ըստ բաղդի առնուած տասն հազար տղայոց վրայ ուշադիր քննութիւն մը ցոյց տուած է արդէն ըսան տարի առաջ թէ կարճատեսաց թիւն օր քան զօր կ'աւելնայ ցորչափ բարձրանան կրթական հաստատութեանց աստիճաններն: Արդարեւ գըտած են.

1, 4 %	կարճատես գիւղական դպրոցաց մէջ.
6, 7 %	» քաղաքային նախա-կրթարանաց մէջ.
7, 7 %	» աղջկանց երկրորդական կրթարանաց.
10, 9 %	» միջին դպրոցաց.
19, 7 %	» բնական դպրոցաց.
26, 2 %	» գիմնազիոնաց մէջ:

Միւս կողմէ, կարճատեսութեան նոյն աստիճանաւորումը կը տեսնուի մի եւ նոյն դպրոցին մէկ դասարանէն միւսը:

Նմանօրինակ քննութիւնը եղած են ի վիէննա, Բեդրսպուրկ, Մոսկուա, Մարսիլիա, Նիւ-Եորք, Թիֆլիս: Իբր 30,000 տղայոց համագումարի մը վրայ, արդիւնքներն զգալապէս նոյն եղած են: Մասնագիտաց համաձայն կարծեօք, կարճատեսութեան պատճառն է յաճախ առարկայները

չատ մօտէն դիտելու ունակութիւնն և այդ ունակութեան աչաց մկներուն պատճառած յոգնութիւնը : Այս առթիւ ականյայտնի կը տեսնուին այն միասնները զորս կը սլատ- ճառէ դպրոցական նստարանաց եւ գրա- սեղանաց յոռի յարգարում մը : Արդ , գրե- թէ ամենուրեք , թէ՛ հին եւ թէ՛ բազմա- թիւ նոր հաստատութեանց մէջ , այդ յար- դարում այնքան թերի է որ աշակերտը հար- կադրուած են օրն ի բուն կարգալ , գրել եւ գծագրել՝ զլոյսնին ծռած եւ շատ մօ- տէն նայելով . գրեթէ ամենուրեք , հեռա- ւորութիւնը շատ մեծ է նստարանին և գը- րասեղանին միջեւ , որովհետեւ տղայն ստի- պուած է իւր տետրակին վրայ ծռիլ . եւ գրեթէ ամենուրեք գրասեղանը շատ ցած է , որով տղայն հարկադրուած է կրել : Բաց աստի , գրասեղանի մակերեւոյթը շատ ան- գամ հորիզոնական է կամ քիչ ծռած , — թերութիւն որ մի եւ նոյն արդիւնքը կ'ու- նենայ :

Վերջապէս , նստարանը միշտ թիկն չ'ու- նի , որով յոգնած տղան միշտ առաջ կը նստի : Եւ , նոյն իսկ այն կրթարանաց մէջ ուր դարման տարուած է այս անպատե- հութեանց , նստարանն եւ գրասեղանն եր- բէք չեն համեմատիր աշակերտին հասա- կին :

Ի՛նչ սխալներ , և ի՛նչ ոճիրներ առող- ջաբանութեան դէմ : Ասկից աւելի գէշ խը- նայողութիւն չի կրնար լինիլ : Մանաւանդ ինչո՞ւ է սա թերութիւնն զոր ամենէն դիւրին է դարմանել , — նստարանին և գրա- սեղանին միջեւ չափազանց հեռաւորութիւն : Պարզապէս կարգապահութեան պատճա- րաւ , — որպէս զի աշակերտը կարենան անմիջապէս ելնել իրենց նստարանէն ի կոչ վարժապետին : Որո՞ւ հոգ եթէ սա վտանգի կ'ենթարկէ անոնց տեսութիւնը :

Ուրիշ կարեւոր կէտ մ'է նաև վարժարանի սրահին կամ դասատանց լուսաւորման եղա- նակն : Յայտնի է արդարեւ թէ մարդ ո՛ր- չափ գէշ տեսնէ , նոյնչափ աւելի աչերը կը մօտեցնէ գրքին՝ կամ տետրակին : Ուստի անհրաժեշտ է ապահով լինիլ թէ ծառեր կամ չրջակայ շէնքեր չեն արդելուր դպրո- ցին սրահներուն լոյսը , պատուհանները բա- նալ աշակերտաց աջ եւ ոչ՝ ձախ կողմը ,

որպէս զի իրենց ձեռքն ստուեր չը թողու տետրակին վրայ . թէ այդ պատուհանները լինին թարձր , պայծառ , բաւական թուով : Պէտք է գգուչանալ տղայոց կարգալ կամ գրել տալէ օրը տարածամած միջոցին : Եւ մանաւանդ պէտք է հոգ տանիլ որ տը- դայք աշխատութեամբ չը ծանրաբեռնին , որովհետեւ վարժարանաց մէջ կարճատե- սութեան աստիճանաւորումն իսկ ցոյց կու- տայ թէ ո՛րն է չարեաց գլխաւոր պատ- ճառը :

Անժխտելի է թէ երկրորդական կրթու- թեան յայտագիրք քանի մը տարիներէ ի վեր այնքան ընդարձակուած են որ միջակ իմա- ցականութիւն ունեցող տղու մը համար գրեթէ անհնար է լրջութեամբ ընդգրկել զայն : Արդ , պէտք է զանոնք ի նկատ առ- նուլ , և ո՛չ թէ ընտրեալ երեւակայութիւն- ներն : Այսօր բոլոր տեղեկագիրք կը հաս- տատեն դասի ժամերու չափազանցութիւնն բաղդատմամբ մարմնամարզի տրուած քիչ ժամանակուան , մանաւանդ ի Գերմանիա : Տըրր եւ Ֆըչ այս մասին բաղդատութիւն մ'ըրած են Անգլիոյ , Ֆրանսայի եւ Գեր- մանիոյ միջեւ , տասնէն տասն եւ ինը տա- րեկան տեւող դասընթացից համար : Եւ ա- ռասիկ արդիւնքն .

	Աշխատութեան ժամը	Մարմնարզի ժամը
յԱնգլիա	16 , 500	4 , 500
ի Ֆրանսա	19 , 000	1 , 500
ի Գերմանիա	20 , 000	560

Այս թուանշանք ինքնին պերճախօս են , եւ ա՛լ եւս զարմանալ պէտք չէ կարճատե- սաց յարաճուն թուոյն վրայ , առանց խօ- սելու ողնայարի , արեան սլակասութեան , խոյլի եւ ուրիշ հիւանդութեանց վրայ որք յաճախ առաջ կուգան առողջապահական այսքան թերի սլայմաններէ :

ԵՒԱՅԼՆ

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ԱՐՁԱՊԱՆՔ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

Արտակարգներու երկերը. — Լարախաղաց ձին. — Բարեյաջող կատակ մը. — Արիւնարբու հրէշ մը. — Մանկասպան կինը. — Ամերիկեան խաղեր. — Մարդու մը տարիքը գիտնալ. — Թուաբանական զուարճայի հաշիւ մը:

Միացեալ Նահանգաց Ժողովրդեան Ժա-
նօթանալու կամ լրագրաց ուշադրութիւնը
գրաւելու ամենադիւրին ճամբան է այս
երկրիս մէջ տարօրինակ գործ մ'ընել: Մար-
դուն մէկը շաբաթներով խօսակցութեան
առարկայ կը լինի ոտնելով Պրուքլինի կա-
մուրջէն. ուրիշ մը երեւելի կը հանդիսանայ
անօթի մնալով. մէկն ալ ուշադրութիւն կը
գրաւէ Նիակարան անցնելով: Այս վերջինը
ճիշդ երկու օր առաջ յաջողեցաւ կտրել այդ
ահեղ գետն, փոխարէնը շահելով իր երեք
հազար տօլար: «Ալիքներու թագաւորն»
— այսպէս կ'անուանեն լրագիրը — Պոս-
թօնցի ոստիկան մ'է ընտանեաց ու զաւա-
կաց տէր. այս անձ թղթակցի մը հետ խօ-
սած ատեն ըսեր է թէ ուրիշ անգամ մ'ալ,
եթէ աշխարհի բոլոր հարստութիւնը տան
իրեն չը պիտի ընէ նոյն փորձն: Եւ արդա-
րեւ կենաց հետ խաղալ կը նշանակէ մտնել
այդ ջրին մէջ, որոյ համար ըսած է Գեաթ-
զըն Ուէպ — որ գործեց նոյն խենդութիւ-
նը — թէ աշխարհիս ամենէ սրընթաց ջուրն
է այն: Անցեալներն ուրիշ մ'ալ տակառով
մը անցաւ այս ջուրն և վերջերս հազարաւոր
ականատեսներու ներկայութեամբ կրկնեց
նոյն փորձն:

Իսոյց աւելի զարմանալին կայ: Ահա տե-
սէք թէ Պֆայօնքն քաղած հեռագիր մը ինչ
կ'ըսէ. «Ատամ Թորփօթն, երեւելի ցուցա-
բարն է որ ներկայ Ժամանակիս մէջ կը զար-
մացնէ զաշխարհ իւր զօրութեամբ, խա-
ղալով Նիակարայի բնական վտանգաց հետ: Իւր
գործակալներէն մին այսօր, առաջին
անգամ գլով, ծանոյց թէ Ատամ իւր Պլօն-
տէն անուն ձին պիտի քալեցնէ պարանի մը
վրայէ, որ պիտի երկնայ Նիակարայի լայ-
նութեան վրայ:»

Ատամ գնած է այս ձին երեք տարի ա-

ռաջ վէսթիէսթրի մօտ, եւ նոյն ատենէն
սկսած է վարժեցնել զայն լարագնացու-
թեան: Առաջին անգամ Ատամ իւր ձիուն
վրայ նստած կ'անցնի եղեր երկու ոտք
բարձրութիւն ունեցող չուանի վրայէ եւ
հետզհետէ սկսած է բարձրացնել զայն: Փոր-
ձերն շատ յաջող եղած են անանկ օր Ա-
տամ եւ Պլօնտէն առանց ո'ր եւ է վտանգի
անցնիլ սկսած են խիստ բարձր կոպուած
լարերու վրայէ. եւ նմանապէս ետ քա-
լելու մէջ ալ նոր լարախաղացն յաջողակ է
յոյժ:

Կ'ըսուի թէ ձի մը աւելի դիւրութեամբ
կրնայ քայլել պարաններու վրայէ քան թէ
մարդս. վասն զի այս առաջինն չորս ոտքեր
ունի որք հաւասարակշռութիւնը պահելու
լաւագոյն միջոցներ են, միայն թէ վարժու-
թիւն պէտք է:

Քուր անունով մէկը Նիակարա կը գըտ-
նուի այժմ երկաթեայ պարանն, այսինքն
մահուան ուղին պատրաստելու եւ հաստա-
տելու համար. որմէ վերջ ծանուցմունք պի-
տի սկսին ցրուիլ ամէն կողմ մեծ ցոյցին
իրար հրաւէր:

Կ'ըսուի թէ այս ցոյց մինչեւ ցարդ ե-
ղածներուն մէջ նշանաւորագոյն պիտի լինի,
եթէ մահն, որ երկաթ գծին վրայ պիտի
սպասէ, կուլ չը տայ Պլօնտէն ու Թորփօթն:

Տեղւոյս հարուստ ընտանիքներէ միոյն
գուտարը զուարճալի կատակ մը ընելու հա-
մար, հետեւեալ ծանուցումը կը հրատա-
րակէ թերթի մը մէջ. «Ես գեղեցիկ երի-
տասարդ մ'եմ, հարուստ և լաւ կրթուած.
կը փափաքիմ ծանօթանալ չքնաղ օրիորդի
մը հետ որ նմանապէս պէտք է լինի մեծա-
տուն եւ կրթեալ. հասցէ Փօսթ-Օֆիսի
(...րդ արկղը*)»: Երեսուսարդ մը զայս
կարգալով կատակի համար նամակ մը կը գրէ
յիշեալ հասցէին կեղծ ստորագրութեամբ
ըսելով թէ. «Ես քու փափաքած աղջիկն
կրնամ լինիլ, որոջ տեղ մը որ դամ ու-

*) Թղթատարութեան մեծ պաշտօնատուներուն
մէջ (Փօսթ-Օֆիս) փոքրիկ արկղեր կան թուի վը-
րայ շարուած առանձին բանալիներով: Մէկը կրնայ
ունենալ սոյն արկղերէն մին վճարելով որոշեալ գու-
մար մը, որուն մէջ կը գրուին իրեն ուղղեալ նա-
մակք ևն, ուսկից արկղին տէրն ին փափագած ա-
տեն կուգայ ու կ'առնու զայն:

տեսնուինք : Կերպապէս մի քանի թղթա-
կցութիւններ փոխանակուելէ յետոյ վեր-
ջինը (այսինքն երիտասարդն կամ կեղծ աղ-
ջիկը) իւր տունն որոշեալ ատեն մը կ'սպասէ
երիտասարդին որոյ հետ կատակ մը պիտի
ընէ եղեր : Հարկ է ըսել նաեւ թէ այս վեր-
ջինն իւր սովորական հագուստը չի փոխեր ,
ու կը պատուիրէ իւր տան տիրոջ ըսելով թէ
այս ինչ անուն օրիորդը փնտռող երիտա-
սարդ մը երբ գայ , իմ սենեակս առաջնորդէ
զինքը :

Վերջապէս որոշեալ ատենը ծանուցումը
հրատարակողը կուգայ իւր սովորական հա-
գուստներով այսինքն աղջկան մը զգեստ-
ներով ու կը մանէ իւր թղթակցի սենեակն
ու անդ երիտասարդ մը կը գտնէ , նմանա-
պէս երիտասարդը նորեկն օրիորդ մը կը
տեսնէ : Բայց այս չէ զարմանալին , զի բը-
նական հետեւութիւնն էր գործոյն : Երբ
այս երկու էակները կը հանգիպին միմեանց ,
ամէն բանէ առաջ կը փաթթուին իրարու ,
վասն զի քոյր եւ եղբայր են եղեր :

Երիտասարդն քանի մ'ամիս առաջ բար-
կանալով , տունէն կը հեռանայ եւ այլ եւս
չի վերադառնար , թողլով ծնողն ու բա-
րեկամը մեծ կասկածի մէջ ու կ'երթայ ե-
րեւելի տան մը մէջ կը բնակի տարբեր ա-
նունով եւ հոն կը բռնուի իւր քրոջմէ կա-
տակի մ'առթիւ : Երիտասարդը քանի մ'օր
առաջ իւր ծնողաց քով կը վերադառնայ ու
կ'ուրախացնէ զանոնք :

Միւս օրի մէջ Բօլին Միլէլդիտ անուն
այրին իւր տան մէջ մանր երախայներու
կայարան մը , լաւ եւս է ըսել պանդոկ մը
կը հաստատէ վեց ամիս առաջ , ուր կ'ըն-
դունի ամէն դասու մի երկու ամսուան ե-
րախայներ խնամելու համար՝ որոշեալ վարձ-
քով մը : Սոյն գերման կնիկն կ'ընդունի ե-
ղեր նաեւ հիւանդ մանկիկներ ու կը խը-
նամէ զանոնք . եւ ի հարկէ շատ մը բնա-
կան զաւակներ , ինչպէս սովորութիւն մ'է
այս երկրի մէջ , իրեն կը տանէին որ մեծ-
ցնէ զանոնք : Այրին բաւական լաւ ճամ-
բայ մը գտած է կ'ըսուէր այս միջոցաւ զը-
րամ չահելու :

Սորա քով կը ծառայէր տասն եւ ութա-
մեայ օրիորդ մը Լինա Մէյըս անուամբ ,
որ պաշտօն ունի եղեր խնամել մանկիկնե-

րն : Օր մը Լինա կը տեսնէ որ այրին խո-
շոր ասեղ մը կը կոխէ մանկան մը սրտին
մէջ , եւ հոսկ ուրեմն կ'սպաննէ զայն այդ
կերպով : Օրիորդն ոտականութեան տեղե-
կութիւն կուտայ եւ սա կ'սկսի հսկել ա-
րիւնարբու այրւոյն վրայ , որ այդ դժոխա-
յին միջոցաւ մանկիկներու կեանքը կորզե-
լով , զանոնք խնամելու համար կանխաւ ա-
ռած դրամները կը գիլէ եղեր : Երէկ ոս-
տիկանութիւնը կը ձերբակալէ ահաբեկ ոճ-
րագործն , որուն տան ստորին յարկն խու-
զարկուելով թարմ գերեզմանի մը մէջ կը
գտնեն երեք անմեղներու դիակներն ասեղ
ի սիրտ : Քննութիւնը հաստատած են եղեր
թէ այդ մարմինը երեք չորս օրուան զոհեր
են եղած : Խուզարկութիւնը շարունակուած
է , եւ տան աղտերուն մէջ մէկ թզաչափ
խորունկ գետնի տակ գտնուած են ուրիշ
դիակներ մի և նոյն սպանիչ ասեղներով :

Մահահոտ գերմանուհին բանտ կը տա-
րուի , որոյ գատաստանը չը գիտցուիր թէ
երբ պիտի տեղի ունենայ : Ժողովուրդն որ
խիստ յուզեալ է այժմ , փափաք կը յայտ-
նէ Լինայ օրինօք կախել այդ ոճրագործն :

Ամերիկացիք ալ ուրիշ ազդաց պէս իրենց
խաղերն ունին , որք շատ անգամ ձմրան
երկար գիշերներու ձանձրոյթը կը մեղմեն
ու երբեմն երեկոյթներու մէջ տեղի կ'ու-
նենան : Այս կարգի խաղերու մէկ մեծ
մասն , գուցէ բոլորն ալ , հրապարակագիրը
կը հնարեն , իրենց ընթերցողաց հետա-
քըքրութիւնը շարժելու համար : Այս երկրի
մէջ հրատարակուող շատ մը թերթեր կ'ը-
նեն զայս ինչպէս որ ողջոյն լրագրութիւնը
զուարճալիքները չի մոռնար բնաւ :

Այս կարգի խաղերու վրայ ճաշակ մը
տալու համար Մաքսի ընթերցողաց հետեւե-
տալները կը ներկայացնեմ , յուսալով որ սի-
րով պիտի ընթեռնուն ու փորձեն : Բայց
սակայն թող չը մեղադրեն զիս սոյն տողերն
ձմրան չը պահելուս համար , վասն զի այդ
եղանակն է միայն այս կարգի խաղերու ժա-
մանակն :

Ի՞նչպէս գիտնալ մէկու մը տարիքն .

Առ հետեւեալ ցուցակն ու ցոյց տուր
զայն բարեկամիդ հարցնելով միանգամայն
թէ իւր տարիքին թիւն ո՞ր սիւնակին կամ

ո՛ր սիւնակներուն մէջ կը գտնուի . երբ նա տայ քեզ հարցմանդ պատասխանը գաղտնիքը գտած կը լինիս : Գումարէ քեզ ցոյց տրուած սիւնակներուն վրայի թիւերն որոյ գումարն կը լինի բարեկամիդ տարիքն . — օրինակ . դենք թէ 17 տարեկան է այդ անձ , եւ այս թիւը կը գտնուի Ա եւ Ե սիւնակներուն մէջ որոյ առաջին թիւերն 16 եւ 1 , գումարելով կ'ունենանք 17 : Ուրիշ մ'ալ . թող 63 լինի փնտռուած տարիքն , եւ այդ թիւ կը գտնենք Ա , Բ , Գ , Դ , Ե եւ Զ սիւնակներուն մէջ որոյ առաջին թիւերն հաւասար են 63-ի .

$$1 + 2 + 4 + 8 + 16 + 32 = 63 :$$

Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Զ.
1	2	4	8	16	32
3	3	5	9	17	33
5	6	6	10	18	34
7	7	7	11	19	35
9	10	12	12	20	36
11	11	13	13	21	37
13	14	14	14	22	38
15	15	15	15	23	39
17	18	20	24	24	40
19	19	21	25	25	41
21	22	22	26	26	42
23	23	23	27	27	43
25	26	28	28	28	44
27	27	29	29	29	45
29	30	30	30	30	46
31	31	31	31	31	47
33	34	36	40	48	48
35	35	37	41	49	49
37	38	38	42	50	50
39	39	39	43	51	51
41	42	44	44	52	52
43	43	45	45	53	53
45	46	46	46	54	54
47	47	47	47	55	55
49	50	52	56	56	56
51	51	53	57	57	57
53	54	54	58	58	58
55	55	55	59	59	59
57	58	60	60	60	60
59	59	61	61	61	61
61	62	62	62	62	62
63	63	63	63	63	63

Հետեւեալ պարզ կանոնով կրնանք գըտնել շարթուան մը ո՛ր եւ է մի օրն , որուն հանդիպած է կամ պիտի հանդիպի դարուս ամիսներուն մի թիւը : Օրինակի համար 1841 ասորիւ 5ը ի՞նչ օր էր , այսինքն Բշ . Գշ . Եշ . ևն :

Տրուած տարւոյն վերջի երկու թուանակներուն (միաւորին եւ տասնաւորին) վերայ աւելցնելու է նոյն թուոյն մէկ չորրորդն ի բաց թողնով միշտ միաւոր թիւը : Սոցա գումարին վրայ պէտք է բարդել ամսուան աւուր թիւը , եւ յաւելուած մը (ամսուան յատուկ) հետեւեալ ցուցակին համաձայն . սոցա բոլորին գումարը պէտք է բաժնել եօթնով , մնացորդը պատասխանն է . չի մոռնամ ըսել թէ 1ը կիրակի , 2ը Բշ . 3ը Գշ . ևն կը նշանակէ :

Յաւելուած թիւերու ցուցակն

Յունուարի	Համար	աւելցնելու է	3
Փետրուարի	»	»	6
Մարտի	»	»	6
Ապրիլի	»	»	3
Մայիսի	»	»	1
Յունիսի	»	»	0
Յուլիսի	»	»	2
Օգոստոսի	»	»	5
Սեպտեմբերի	»	»	1
Հոկտեմբերի	»	»	3
Նոյեմբերի	»	»	6
Դեկտեմբերի	»	»	1

Նահանջ տարիներու համար

Յունուարին 2 Փետրուարին 3
մնացեալը նոյն են վերի ցուցակին հետ :

Օրինակ . 1841 ասորիւ 5ը ի՞նչ օր էր .

Նախ դնելու է 41
(1841ին վերջին երկու թիւերը)

Այս թուոյն կցելու է 10

(40ին 1/4ը միաւորը թողնով)

Ամսուան միաւոր թիւը 5
(ասորիւ 5ը)

Ամսուան յաւելուածը 2

58	7
56	8

Մնացորդը եւ պատասխան 2

Ուրեմն փնտռուած օրն երկուշաբթի է :

Հ . ԷԿԻՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԱՌԱՆՅՆՈՒԹԻՒՆ

Աս անմարդի ափը չըբնաղ տեղերուն
Միշտ ունեցայ կարօտ սրբափայլ ապրելու,
Նողկանքն անզուսպ գուցէ սպառել մէնա-
սէր:

Կայծակնահար նրման նոճւոյն լեռնասուն,
Որ շուք ձըգած թեթեւաշարժ զինչ ուրու,
Եւ տալիս է շըշուկ մահւան հողմերը:

Ա՛յ, խորշիկ է ինձ մընալ քաղաքում
Ուր լոկ տեսնում ագահութեան ճիգն ազ-
դու,

Ուր գէմքերու վըրայ տըպւել է կընճաած
Անէծք՝ զոր մարդ ակօռայ կըրճող է խոկում
Դըրացւոյն գէմ բաղդին անգութ, լ'Աստու-
ծու,

Նըրանց դըրդում է նախանձին թիւնոտ
խած:

Այսչափ մարդկան բազմութեան մէջ միշտ
մինակ,

Միշտ հեծելով աղաղակում ընդհանուր,
Անհոգ ժըպիտ շըրթանց, ո՛հ դառն ինձ թը-
ւէր,

Բարեկամներ որ նըւիրեն լուկ բաժակ.
Ո՛հ թէ հողի մ'ըլլիր սիրոյս անձնատուր՝
Ել ապահով, միւսներն են ինձ անտարբեր:

Եթէ կարող է կենդանի բընութիւն
Հոգնած կամքիս անպէս հանգիստ պարգե-
ւել

Որ հուսկ ազդէ ծոցը բեղուն մի խանդ նոր,
Եռայ արիւնն փայլին առջեւ արեւուն,
Ա՛յլ զօրութիւն գործունեայ ի՞նչ է սըփռել,
Սըրտաչէն է քիչ մ'յոյս, զինչ բոյնն խտրի
կտոր:

Ապրիմ պիտոր եռանդնաշարժ քանց մանուկ.
Ձեփիւռներից՝ ինչպէս բընար թըրթըռուն,
Ամէն երկայն ձէն բարախիւն իս հանած,
Յօղը կարծես որ զովցընէ իմին սուգ,
Յընորք սիրոյ թէ տան շողեր աստղերուն,—
Հէնց նա ինքն է վեհ բնութիւն իմ Ոս-
տուած:

Որ գութ առած իմ ցաւալի վիճակին՝
Եւ մայրենի ցըցունում է այդ խընամ.
Առատ տեղայ ինձ ճոխութիւն երկընքի
Ձէտ մըխիթար, որ ըզգացմունք գըրաւմին,
Ես գերըզմայլ գեղով մոռցած զիս մընամ,
Ձինչ արձագանդ անհուն սըփռի շուրջ հողի:

Հոս, ինձ ծանօթ է արյս մեղմիկ երեկոյն
Որ փափկասէր ազդմամբ թըւի հողմասլաց,
Թուխ թեւերուն ներքեւ ծածկած ամէն իր.
Հոյն է ծանօթ որ կենդանացում է իսկոյն
Մարգն հոտաւէտ, տարածութեան մէջ թո-
ղած,
Ձինչ հեռաւոր ծովի, հաւսար մըրմունջ ցիր:

Եկէք խումբեր միջատներու ոսկեվառ,
Հետաքրքիր աշխատութեան ձեր լինում,
Դիտել ինչպէ՛ս ընտրէք լեցուն ծաղկըներ,
Որոնք ձեզմով ծածանում են ծաղրաբար.
Մըծում էք զուտ հիւթը, ծալած թերթե-
րում
Թըմրած պահեն պիտոր ձեզի էլ գիշեր:

Իսկ դու լըճակ, հեղ մըտերիմ, ինձ նըման
Ամիսի, քու մէջ խռովիս, ժըպտիս նըշու-
լին,

Ուրպըտոյտ ձօճի՛ր չորս դին փըրփրացայտ,
Տեսըղդ դաշտի ձերմակծաղիկ է գարնան.
Ձոր մըրմընում են ալիքներդ որ փըշրին՝
Ուրիշներու համար մընում է անյայտ:

Եւ քու ափին կըրնայ մի մարդ հանգչիլ
մօտ,

Մոռցած դէմքի մի սիրային էլ հաճոյք
Ձըւարթագեղ՝ երկու աչաց փայլին հետ,
Նըման ծըփմանդ մըթընչաղում չողագող.
Եւ զինչ տեսիլք թըւի ժըպիտ երկնազոյգ
Հորիզոնում չըբեղ լինում է անհետ:

Այլ բարձրանում է լուկ լուսին ամպերում,
Մի գետնասահ թողլով թեթեւ ճառագայթ,
Ձոր բընտուում եմ իբրեւ հետքեր սիրուհ-
ւոյն:

Երբ կուսական դէմքն է անքօղ երեւում,
Ամիսիում է զիս նըշուլով ծանրակաթ,
Գըլուխ ծըռած, խաղաղի կուրծքս եռան-
դուն:

Վըշտի, սիրոյ խընամատար երկնային.
Երբ անտառին վըրայ կախւիս լուսով շեղ,

Որ երեւոյթն առնու աշնան տըժգունած ,
Դու հրաւիրում ես տըխրութեան բնութիւն-
ին .

Հէնց թէ իջնաս առանձնութեանս յետին
տեղ՝

Յիշեա՛ , լուսին , հողվարքն անշուք հոն լը-
ւած :

Ո՛հ քու ծածկէ զայն ճառագայթ մըխիթար .
Արծաթաթեւ քօղ հարսնական մայր քընքուշ
Այսպէս սըփուում է երբ նընջում՝ անդրա-

նիկ ,
Գէթ բընութեան ծոց՝ տի գըտնամ հուսկ
գաղար ,

Տակաւին բազր է թէ չունի սիրոյ յուշ՝
Փոշոյս վըրայ հանէ բնութեան խուն ծա-
ղիկ :

Վ . ՍԸՎԱՃԵԱՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ՍԵՒ ԾՈՎԻ ԱՓԻՆ

Այժմ հաշուենք Սեւ ծովի ափերի վե-
րայ նորերումս հայ գաղթականաց թիւը և
տեսնենք ֆիւթիւր որքան է։ Որքան որ ես
տեղեկացայ իմ հաշուով հասնում է 704
ընտանիքի, և եթէ մի ընտանիքի մէջ մի-
ջին թուով հաշուենք 5 հոգի, ուրեմն
 $704 \times 5 = 2112$ հոգի է դուրս գալիս։ Բո-
լորն էլ Բայազիթի, Ղարսայ, Վանայ և
Կարնոյ կողմերիցն են գաղթած։ Ներքե-
ւում յիշեալ բոլոր գաղթողներն էլ ընկել են
անձամբօթ և ջերմոտ վայրեր, որ և Ռուս-
սաց տէրութիւնը որոշեալ պայմաններով
ձրիաբար բաժնել է նոցա անմշակ, բերրի և
արգաւանգ հողերը. շատ տեղերումն էլ մի
քանի տեղական կալուածատէրներին հեշտ
պայմաններով վերցրած ունեն հողերն և
այնպէս մշակում են։ Սոքա մեծաւ մա-
սամբ պարապում են երկրագործութեամբ
և մասամբ արհեստներով. երկրագործական
գլխաւոր պարապմունքն է ծխախոտի մշա-
կութիւնը, որովհետեւ տրուած հողերը իսկ
նորա մշակման յարմար են, բայց մեծաւ մա-
սամբ դժուարամերձ և ջերմոտ տեղեր,
նոքա մեծաւ մասամբ ցրուած են ափսաղ-
ների, չերքեզների եւ խախոլ ասուած ուրս-
ների մէջ։ . . .

Նոքա դեռ ևս հաստատ և պինդ պահ-
պանում են իրանց լեզուն և կրօնը, բայց
ցրուած գոլով զանազան դժուարամերձ
դաշտավայրերում, համարեայ թէ յարաբե-
րութիւն չունին միմեանց հետ և միանգա-
մայն զրկուած են հոգեւոր-կրօնական մխի-
թարութիւնից։

Ներկայումս եթէ մանրամասնաբար հաշ-
ուենք, Սեւ ծովի ափերի մեր հայ գեղջուկ
գաղթականաց տեղերը հետեւեալներն են.
1) Անապան և սորա շուրջ եղած գիւղերը,
որտեղ հասնում է հ. գաղթականաց թիւը
մինչեւ 40 ընտանիք, 2) Անապայից 35 վ.
հեռու Կրիմսկ գիւղաքաղաքում և սորա
շուրջ եղած ծխախոտի պլանտացիաներում
կան մինչ 30 ընտանիք, 3) Նօլօրօսսիս-
կում և սորա շուրջ եղած չխաբնակ գիւ-
ղերում կան մօտ դարձեալ 30 ընտանիք,
4) Աբին, սա կօղակներէ գաղթած գիւղն
է, այստեղ կան մինչ 16 հ. ընտանիք, 5)
Բերեգաւոյներ, այսպէս են անուանում,
որովհետեւ հենց ծովին կպած կան մի քա-
նի փոքրիկ գիւղեր ուր կան Ռուսաստա-
նից աքսորեալ գիւղացիք. այս տեղերում
հայերը ցիր-ցան են, ուր կան մինչ 38 ըն-
տանիք, 6) ա) Շուբչաւայ, սա ամենամեծ
գիւղն է, որտեղ հայոց թիւը հասնում է
մինչ 130 ընտանիքի, որին ուսններն ան-
ուանում են Հայոց գիւղ, որովհետեւ
միայն հայերն են բնակվում. ունեն փայ-
տաշէն եկեղեցի ու հայ քահանայ։ Շուբ-
չաւայի չորս կողմը կան վեց հատ փոքրիկ
գիւղեր, որտեղ կան մօտ 500 հ. ընտանիք
այս տեղերում մեծից մինչեւ փոքրը պա-
րապում են ծխախոտի մշակութեամբ, սո-
ցա նաւահանգիստն է Դժուբան։ 7) Տուապ-
սէ, 8) Սօչա, 9) Ատլեր, 10) Գուտաուտ
և 11) Օջեմչիւր ծովափնեայ տեղերում և
դոցա շրջակայ գիւղերում քիչ-քիչ են գաղ-
թած, և թիւը հասնում է մինչեւ 100 ըն-
տանիքի, այստեղ ամենքն էլ համարեա
պարապում են վաճառականութեամբ, միայն
շատ փոքր և աննախանձելի դիրքով։ Հաշ-
ուելով այս վերոյիշեալ տաճկաստանցի հայ
գաղթականաց թիւը և գումարելով՝ դուրս
է գալիս 704 ընտանիք։

Թէ ի՞նչ միջոցների պէտք գիմել սոցա
ազգային ամբողջութիւնը պահպանելու,
մենք մի ուրիշ անգամ կ'խօսենք, սակայն

մի կէտ կայ որ ամենքի համար պարզ է , այն է , որ Հոգեւոր իշխանութիւնը պէտք է և կարող է պահպանել սոցա կրօնական ամբողջութիւնը , իւր խնամքի ներքոյ առնելով նոցա հոգեւոր պահանջները . . .

ԱՄԻՐԱՂԵԱՆ

(Արշալուսն)

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԲԱՂԷՇԷՆ Ի ՊՈԼԻՍ

Ա.

Սեպտ. 2 — Ժամը վեցին մեկնեցանք Բաղէշէն ու սկսանք մտնել Բազմայի երկար հովիտի մէջ , զոր կը պարսպեն երկու կողմի բլրաղլթայնեմն . մեր աջ կողմն է Տիգրիսի փոքր հոսանքն , որի հովիտը կը կազմէ Բազման : Բլրաղլթայներու երկու կողմէն գեղերու շարքեր ու ջրերու վազեր կը տեսնենք , որք Տիգրիսի մէջ կը մտնեն ու կը մեծցնեն զայն : Բազմայի անունը հին արձանագրութեան մը նայելով դարադաշտ է եւ սակայն բուն անուն մը չը ներկայացըներ ասիկա , այլ այն հանգամանքի ձեւակազմութիւն մը , որով քիչ քիչ աստիճաններու ձեւով խոր երկրի մը մէջ կ'իջնէ տափազեմին մը . այսպէս է Բազման , որ վառայ ծովու ու Մշոյ դաշտի բերնէն սկսելով հովտային բացութիւն մը կը կազմէ ու աստիճանական հատածներու ձեւով Սղերդի կողմը կ'իջնէ . Բազման հին թաղաւորական լեզուի մէջ անցը կը նշանակէ ու գուցէ սարակինոսական արշաւանքի միջոցին ստացեր է այս անունը :

Մեր անցած գետինը Նեպտոնեան է . ամեն տեղ հողաթերթեր կը գրաւեն մեր ուշը . մէկ ժամ անդին մեծ գետնուռեցի մը քիթը անցնելէն վերջ Գրգուռի գագաթին ու իւր հինգ թամբերը կը տեսնենք . երեք ժամ անդին Պաշ - խան , քիչ մը անդին մեծ ու փոքր Բազման , որք Տիգրիսի ու Վանայ ծովու ջրաբաժանումը կը կազմեն : Մեր ճամբան փոքր Բազմայէն կ'անց-

նի . կը տեսնենք Սիւրան , ու Գրգուռի ըստորոտի ուղղութիւնով Թաթալուռի հարթութիւնը կտրելէն վերջ Կայնէ-բաշի անտառադաշտի մէջ կը մտնենք . մեր քովն է հիմա Գրգուռն : Իւր անունը , որ մեր գաւառալեզուի Գրգուռ - Որոտուռ - բառն է , կը ցուցնէ արդէն , որ հրաբխային մեծ գործողութիւններ ունեցեր է այս լեռն . փոքր Գրգուռի ետին մեծ Գրգուռ անտառալեռը , անոր քով Նամրուտ , որ արեւելեան հիւսիսային կիսաբոլորակ մը կը կազմէ : Նամրուտը անմեռ կը նշանակէ բրդական լեզուի մէջ ու անկէ կառնէ իւր այս անունը , որ այս լեռան Աշիթթի գլխաւորը կ'ըսեն , կռուի մը մէջ նոյն ինքն մեռնելու ատեն Աշիթթ , « Ես չեմ մեռնիր » գոչեր է :

Մեր առջի կայարանը Կայն-Բաշ - Սեւ Աղբիւրն էրաւ , որ Նամրուտի կողքի վերայ կ'իյնայ , քրդագեղ , վեց տուն . իւր անունն աղբիւրի այն սեւ , հրաբխային քարերէն կ'առնէ , որոց մէջ վազելով սեւ կ'երեւի իւր ջուրն :

Սեպտ. 3 — Նամրուտի արեւելեան հիւսիսային թեւէն կ'անցնիմք ու Կայնէ-Միլ-յանի սարահարթը կ'ենենք , որ Մշոյ դաշտի ու Ախլաթի եղբայրները կը կազմէ . հոս ետեւա , ամառնային զովատեղիներ , ուր կ'ապրին ամառ ատեն քրդերն ու աղբիւրի մը համար , որ իրենց հօտի ջրատեղն է , Կայնէ-Միլան - Ոչխարի աղբիւր - անունը կուտան անոր :

Ժամը երեքին խլաթի մէջն ենք , թուրքերու Ախլաթն , հին Բաշուռնիքն , որ միջին դարու Շահի Արմէն թուրք թագաւորները կը յիշեցնէ մեզի . այս տեղի խլաթները զուտ թուրքեր են , անային լեզուն թուրքերէն : Մէկ ու կէս ժամ Ախլաթի դաշտի երկայնքը չափելէն վերջ Մեծը հայ գիւղը հասանք . մերկութիւն ու խեղճութիւն . անկէ կէս ժամ անդին Նազուքի փոքր լիճը , քառակուսի շեղանկիւն . իւր քով Նազուք հայ-քրդական գիւղն , եօթը տուն : Նազուքի լճակն ո'չ էլք ունի ո'չ մուտք . ջուրը կէս-աղի , ու այս բանն ալ անով կը բացատրուի , որ ներքին աղաջրեր ունի անիկա : Այս լճակին անդին Ղօզանլուի լեռնանցքով ներքին Բուլանլուի մէջ կը մըտնենք մենք . մեր քովը հոս Բլէճան քրդա-

կան սիրերգական լեռը, որ վերին ու ներքին Բուլանուխի միջնորմը կը կազմէ:

Ներքին Բուլանուխ վերին բուլանուխի արեւմտաբաժինն է, որը, բացասելով քանի մը գետնային փոքր ուռեցներ ու միջանկեալ լեռնային բարձրութիւնները Մշոյ, Ախլաթի ու Խնուսի դաշտերու հետ հարաւային Հայաստանի դաշտամասը կը կազմեն:

Բուլանուխ հին Հայաստանի Խորխոռունիք ու Վարաժնունիքն է. գետինը բուն բուսահող, որ կաւի պարունակութիւնով, նախորդ բոյսերու մթազոյն փուտ մնացորդներով կը լեցնէ տեղացիներու ամբարներն. քրդական աւանդութեան մը մէջ կը գտնենք մենք այս երկրի արդի անուան, Բուլանուխի ծագումն: — Բրօշ թագաւորը Բլէճանի վրայ կը նստէր կ'ըսեն, ու երեք տղաքներ ունէր, նոյնպէս սուր մը. ասիկա մտածեց, որ իւր մեռնելէն վերջն այս սուրի վրայ կը կռուին իւր տղաքներն ու գէշն ալ այն է, որ սուրը ձեռք բերողն կը քանդէ ու կ'աւերէ անով բոլոր երկիրն, ասոր համար մեռնելու ատեն փոքր տղայի ձեռքով Խաչ-լուի (կոփի բով) լճի մէջ նետել տուաւ զայն. ծովամիջի «բաջերը» սկսան կռուիլ այս սուրի վրայ ու տակնուվրայ ընելով պղտորեցին լիճն. դեռ հիմա ալ ամեն ուրբաթ օրեր կը կռուին ու կը պղտորեն, ու ասոր համար ալ Բուլանուխ անուն ստացաւ այս երկիրն:

Մեր ճամբորդութիւնը տասը ժամ տեւեց այսօր ու Փիօնք հայ-քրդական գիւղը հասանք, որ Բլէճանի կողքի տակ կ'իյնայ, ութսուն տուն ունի այս գիւղն ու երկու թաղաբաժին, հայ, քուրդ:

Սեպտ. 4. — Մեր առաւօտեան ճամբու երկայնքի ուղղութեան հետ ելեւէջի մասնաւոր հատուածներով բազուկ մը կը զրկէ Բլէճանն հիւսիսակողմէն. ճամբան դաշտային է, բիչ մը անդին կ'սկսինք լեռնային մակընթացութիւններէ անցնիլ ու քարակոյտեր տեսնել, որք դիւր կը պահեն իրենց տակ շունչեր ու կեանքեր, աւաղակային ընդարձակ դաշտային գծի մը վերայէն կը քալենք, որի արիւններու ու սպանումներու մասին կը խօսին մեր ընկերներն, որք Թըրքէ Զիրօ «Զիրօի գերեզման» անունը տուեր են այս տեղին: Թըրքէ Զիրօի գլխի վրայ էինք մենք, երբ

արեւելքէն արեգակ ու վերին Բուլանուխի դաշտ, հիւսիսէն Մուրատ գետ ու իր դաշտագետինն իրենց կողմը կը քաջբէին մօր աչքերն: Ժամը մէկին գետի մէջն ենք, մեր ոտքերու տակ Մուրատ, մեր աչքերու առջեւ Եփրատական երկիր, մեր արեւելքէն արեգակ, մեր արեւմուտքէն լուսին:

Մեր երրորդ գիշերատեղը Ղարաղըշն եղաւ. Փիօնքէն վեց ժամ հեռի, հարիւր տուն հայ: Հոսանքի աջ ափի վրայ դաշտագետնի եզրը Նորկեմիք լեռան կողքը կ'իյնայ այս գիւղն:

Սեպտ. 5. — Նորկեմիք լեռնէն անցնելով Ալի Բօճան լեռան մէջ կը մտնենք, — Բուլանուխէն Խնուսի ու Բաղէշի կառավարական շրջանակէն Կարնոյ կառավարական շրջանակի մէջ, քսան երկու ժամ հեռի ենք մենք հիմա Բաղէշէն: Մեր ձախ կողմի վերայ Շիշան, մեր առջեւ Զեռնակ ու կարմիր լեռներն. ժամ երեքին Զեռնակի գըլ-խէն Դեղթափ լեռը կը տեսնենք ու մեր վերջին բարեւները տալով Մուրատին հորիզոնի տակ կը թողունք զայն ու լեռնային հակումներով ու լեռնամէջ հարթութիւնով մը Խնուսի ջուրը կ'անցնինք ու Ղարաբէօփ. րիւի մէջ կը մտնենք. Խնուսի ջուրը Բինկէօլ-տաղէն կ'ելնէ ու Մուրատի մէջ կը թափի, շատ ձկնէր ունի գետն, ահաւասիկ միմիայն անոնք, զորս յանձնեց մեզի որսորդ գիւղացին իրենց անուններով. — մոզ, սոյ, թեփուկ, կարապետիկ, դեզուկ:

Մեր գիշերատեղը շատ հաճոյալի է այս. տեղ. ջրաղացի մը ըմբէ ենք, որի բոլոր ջուրը երեք ժամ անդին Կարմիր սարէն կուգայ. ալը քառասուն մանուկ կը կոշուի ու ուխտատեղի է. Կարմիր սարի արեւլակողմը Աղըր-կէօլ լճակն, որի ջուրը իրմէ կը բղխի ու երեք քառորդ ժամ ըստորերկրային անցք մը կրագետնի մէջէն բանալէն վերջ կը ճիւղաւորի ու եօթը գիւղերու ջուր կուտայ:

Սեպտ. 6. — Մեր ձախ կողմի վրայ կը թողունք Խնուսն ու Խամիշ բերդի լեռն, որ Բերտ ու Շահվերան հին աւեր քաղաք մը ունի, մեր աջ կողմի վրայ Կարմիր սարն, որ Դեղթափի մէկ մասն է ու կանցնինք դաշտամիջէն: Մեր անցած բոլոր լեռները, մարդս կը տեսնէ, որ բիչ շատ չե-

ընկերներն բոլորակներ կը կազմեն . այս լեռնային շրջագծերու առջեւ շատ ատեն ուրիշ ստորին լեռներ, թեթեւ գահաւանդներ, յետոյ դաշտ ու գիւղեր ու գիւղակներ . իրենց արեւելեան հիւսիսային արեւմտեան շարունակութիւնով լեռնային ուրիշ շրջանակի մը կազմութեան մէջ կը մտնեն այս լեռնային շրջանակներն ու իրարու փակած լեռնաշղթայներու օղակներ եւ վերջապէս հայկական լեռներէն կը կազմեն :

Երեք ու կէս ժամ դաշտային ճամբորդութենէ մը վերջ խոզու գիւղը հասանք , ու նստեցանք . մեր կարաւանը չը բալըր , կը սողայ , անոր համար , որ լեռներ ու ձորեր ու անոնց անցագծերը կը բռնեն բոլորը :

Խոզու , Խոզալի , աւելի ճիշդ Գըգ-Ալի անունէն կ'առնէ իւր ծագումն , որի գերեզմանը գիւղի վերեւ հովիտի մը մէջ կ'իյնայ , զոր կը զարդարեն ընկուզենիներու մեծամեծ ծառերն : Խոզուի արեւմտեան հարաւը Խնուս բերդաւանն , երեք ժամ հեռի . Խնուսը Խնուն ու Խնուսցիները « Խըցեալը կամ խփեալը ի խաւարի » կը հասկընայ Մագիստրոսն , այս հասկացումը հաւատարմական է ու թոնտրականութիւնը կ'անարկէ , որի գլխաւոր հնոցներն էին Թոնտրակ , Թուլայլ ու Խնուս . Գիւղի արեւմտեան հարաւը կ'իյնայ Բինկէօլ , բիւրակնեան լեռներն , որք ստորերկրային հոսումի մեծ ջրեր ունին . Ձեռնակ ու Պինկէօլն Խնուսի դաշտի այն խոտուն ու արածուն լեռները կը կազմեն , որոց համար կ'արժէր իրօք որ Դուարածատափ անունը տային հիներն այս կողմնաբաժնին :

Յ . Մ . ՏՈՒՏՈՒԽԱՆ

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐՔ

Թիի 24.	(Մասիս թիւ 3814)
» 46.	» » 3840)
» 47.	» » 3840)
» 48.	» » 3840)
» 49.	» » 3841)

ԽՆԴԻՐ

Թիի 50.

Քանի մը տղայք մէջերնին կը բաժնեն 120 նարինջ հաւասար կերպիւ : Գտնել թէ քանի հոգի էին եւ քանիկա՞ն նարինջ ունեցան , գիտնալով որ եթէ 4 տղայ աւելի գտնուէր , բաժինը 5 նարինջէ նուազ պիտի լինէր :

ԽՆԴԻՐ ԹԻԻ 45

ԼՈՒԾՈՒՄՆ

Ք կոչենք աղկան բով մնալիք Փրանքներուն թիւը . 5 Ք կը ներկայացնէ գնեալ կանգունները իսկ 80 — Ք ծախսուած գումարը : Արդ , քանի որ մօրը յանձնուած մընացորդ Փրանքները $1\frac{2}{3}$ կանգուն թիւի գինը կը կազմեն , գիւրաւ կրնանք հաշուել թէ 1 կանգունը պիտի արժէ $\frac{5 \text{ Ք}}{5}$:

Յայտնի է ուրեմն որ գնուած կանգունները 1 կանգունին գնով բազմապատկելով , ամբողջ ծախսը կը գտնենք , այսինքն ,

$$5 \text{ Ք} \times \frac{5 \text{ Ք}}{5} = 80 - \text{Ք} , \text{յորմէ Ք} = 5 :$$

Ըսել է թէ աղջիկը դնած է 25 կանգուն թիւը՝ մէկ կանգունը 5 Փրանքի հաշուով :

ԱՆՈՒԱՆՔ ԼՈՒԾՈՂԱՅ

Տ . Կ . Նաւասարդեան , Իզմիր

Տ . Մ . Սարաֆեան Աշակ . Պերպէր .
եան վրժարի .

ՔՂԻ . — Տ . Պ . Սրապեան . — Ձեր թիւ 41 , 42 , 43 եւ 44 խնդրոց լուծմունք ուղիղ են :

ՔՂԻ . — Տ . Տ . Մ . Վարժապետեան . — Ձեր թիւ 42 , 43 եւ 44 խնդրոց լուծմունք ուղիղ են :

ՇԱԲԱԹԱԿԱՆ

ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿ

3 Հոկտեմբեր 1886

Հակառակ Ռուսիոյ պահանջմանց եւ Քաւկասի զօրավարին բողոքանաց , Պուլկարիոյ եւ Արեւելեան Բուսնիի ամեն կողմն

երեստիտանական ընտրութիւնը սկսան այս կիւրակէ օր, կազմելու համար Ազգային մեծ ժողովն որ պիտի ընտրէ Պալկարիոյ իշխանը: Մինչեւ երէկ ընտրութեանց ծանօթ արդիւնքը նպաստաւոր էր արդի խընամակալութեան. ընտրելի 590 երեստիտաններէն ընտրուած են՝ 420 երեստիտանը նպաստաւոր խնամակալութեան եւ 20 երեստիտանը Չանքոֆեան կամ ռուսասէր կուսակցութեան: Կը մնան 150 ընտրութիւնը որոց արդիւնքն անձանօթ է ցարդ: Այս աւթիւ ուրեք ուրեք արիւնա հեղ կուսներ տեղի ունեցեր են երկու կուսակցութեանց միջեւ. մասնաւորապէս ի Սոֆիա, ռուսական հիւպատոսարանին առջեւ մեծ շփոթութիւն մը պատահեր է, յորում բազում վիրաւորեալք եւ մինչեւ իսկ մէկ քանի սպանեալք կան, կ'ըսուի: Մինչեւ ո՞ր աստիճան ստոյգ կամ չափազանցեալ ըլլան այս ծանրակշիռ դէպքեր, իրողութիւնն այն է թէ ընտրութիւնը աւարտած լինելու են այս պահուս եւ Սոպրանիէն պիտի գումարի ի մօտոյ, բաւական է որ քաղաքական անակնկալ դէպքեր չը գան տակնուվրայ ընել ամեն ինչ: Ռուսական դեսպան Պ. Նէլսոնֆ չորեքշաբթի օրը Բ. Դուռն երթալով, երկար տեսակցութիւն մը ունեցաւ Բարձր. Մեծ Եպարքոսին հետ եւ կայս. կառավարութեան մատոյց ծանուցագիր մը, բողոքելով Պալկարիոյ մէջ կատարուող ընտրութեան դէմ, որոյ օրինաւորութիւնը չի կրնար ճանչել Ռուսիա: Միւս կողմէ Բեդրսպուրիէ կը ծանուցուի թէ Չարին կառավարութիւնը կը պատրաստուի միւս մեծ Տէրութեանց ուղղել ծանուցագիր մը որ խոր ազդեցութիւն պիտի ընէ եւ թէ վճռողական միջոցներ ձեռք առնլով վրայ է: Լ. Հեբուլ՝ մայրաքաղաքս հասած մասնաւոր հեռագրոյ մը յենլով, կը հրատարակէ Ռուսիոյ պատերազմական նախարարութեան կէս-պաշտօնական թերթի մէկ կարեւոր լուրը, թէ կայսերական Իւքազով ի գէն պիտի կոչուին ռուսական պահեստի զօրքերն:

Շաբթուս մէջ, քաղաքականութեան վերայ ազդեցութիւն ունեցող լրոց կարգը դասուեցաւ Հափասի հեռագիր մը որ կը յայտնէր թէ Գերմանիոյ կայսրը ծանրապէս հիւանդ է: Այս պատճառաւ ռուսական եւ թրքական արժէթղթոց գներն զգալի անկում մը կրեցին ի սկզբան, բայց ի վերջոյ ստուգուեցաւ թէ հիւանդութիւնն այնքան սպառնական երեւոյթ մը չ'ունէր: Արժէթղթոց անկման եւ ընդհանուր մտահոգութեան պատճառն այն էր թէ ծերունի այսրն անձնապէս մեծ ջատագովն է եւ:

րապիոյ խաղաղութեան, եւ եթէ մեռնի, խաղաղութեան խանգարիչ հաշիւներ, որք Ն. Վեհափառութիւնը չը վշտացնելու համար օրաձգուած են, կրնան ի գործ դրուել:

* * *

Ազգային Կեդր. Վարչութիւնը կարեւոր տնօրէնութիւն մ'ըրաւ Սամսոնի (Ճանիկ) թեմին միացումն որոշելով Տրապիզոնի առաջնորդութեան հետ, ըստ տեղեկագրոյ Գարեգին Եպիսկ. Սրուանձտեանց: Ն. Գերապատուութիւն կը ծանուցանէր թէ, իւր Թագրիբին վրայ, Սամսոնի կառավարչութիւնը բարեհաճած է արտօնել քահանայ մը, բնիկ Եւդոկիացի, Սամսոնի Խաթէի ժողովոյն մէջ բազմիւ իրեւ ժողառաջնորդ ընդ Տրապիզոնի Առաջնորդութեամբ: Սամսոնի ազգայինը գոհ եղած են այս կարգադրութենէ:

Կեդր. Վարչութիւնն ուշադրութեան առնլով նաեւ Տիգրանակերտի առաջնորդութեան եւ նորա թեմօրէից վիճակն եւ այս մասին Մշոյ եւ Տիգրանակերտի առաջնորդութեան եւ կաժ գրութեանց վրայ Տիգրանակերտի կուսակալութեան ներքեւ գտնուող բոլոր թեմերու հոգեւոր հովուութիւնն, որ այլ և այլ վանօրէից յանձնուած էր ժամանակաւ, Տիգրանակերտի առաջնորդութեան յանձնեց ինչ ինչ կարգադրութեամբ, եւ որոշեց միանգամայն որ Գեր. Արիստակէս Եպիսկոպոս ըստ նախորդ տնօրինութեան փոփոխակի վարէ Մշոյ Ս. Կարապետի վանահայրութիւնն եւ Տիգրանակերտի առաջնորդութեան պաշտօններն:

Հայաստանեայց Եկեղեցւոյ վաղեմի պաշտօնեայներէ մին, ծերունազարդ Տ. Գրիգորիոս Արքեպիսկոպոս Տ. Պօղոսեան ի Տէր հանգեաւ երէկ երեկոյ: Հանգուցեալը բարի և առաքինի եկեղեցական մէք, ի գաւառս առաջնորդական ղանազան պաշտօններ եւ ի Պոլիս, Կրօն. Ժողովոյ ատենապետութիւն վարած, բազում տարիներէ հետէ Կ. Պոլիս կը բնակէր եւ մինչեւ իւր կենաց վերջին վայրկեանը կը վարէր Խառօղիւղի Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն բարոյզութեան պաշտօնն: Օծման և թաղման արարողութիւնը կը կատարուին վաղն առաւօտ: Տ. Ա.

Արտօնատէր Կ. Ս. ԻիթիիճեԱն
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵԻԵԼԻ ԻՐԱԳՐՈՅ